

բաղձականին, ի դահ իշխանացն»⁽⁴⁶⁾։ Տեսէք թէ ասիկա որքան կը նմանի Պրինսէ Քաղաքին այն վկայութեան որ վերը տեսանք։ «... ի վերայ աթոռին նստած, եւ խալիչայ մի բուռ մարդարտով լցած ի ներքեւ...»։ Սինեաց եւ Աղուանից (Շիրվան, Շամախ) մէջ ոսկեթել, արծաթաթել, մարդարտաչար եւ մետաքսառէջ գորգերու գոյութիւնը յաճախ կը յիշուի մինչեւ 1561 դոնէ, եւ նոյնիսկ անկէ վերջ ալ, տարակրօյ չձգելով որ տեղական արտադրութիւններ էին։

Ընդունելութեան գորգեր, որոնք ինչպէս տեսանք Թիմուրի օրով Վանի շրջանի հպատակ դարձած մահմետական իշխանները կը համբուրէին կայսերական գորգը՝ ի յարգանս եւ հպատակութիւն, մինչեւ մեր օրերը, կամ մինչեւ 1838 դեռ այդ սովորութեամբ կը մնային Վանի մէջ։ Հոն այցելող Ամերիկացի Պատուելի Horatio Southgate Վանի փաշային իր այցելութեան ատեն կը տեսնէ խնդրակատար մը՝ որ ներս կը մտնէ. «խորունկ խոնարհութիւն մը բրաւ ներս մտնելով, Փաշային շարժման վրայ, անոր գորգին ոտքին ծնրադրեց»։ Մինչ աւելի յանդուգն Քիւրտ մը «աստիճան մը աւելի առաջ գնաց իր յարգանքին մէջ, ան մօտեցաւ, ծուր գրաւ եւ գորգին արտաքին շրջագօտին համբուրեց, եւ ոտքի կանգնելով ձեռքերը առջեւ ծալած կեցաւ»⁽⁴⁷⁾։

Ստեփաննոս Օրբելեան կը վկայէ որ գորգը կը գործածուէր Հայոց մօտ ոչ միայն ողջերը՝ այլ եւ մեռածները պատուելու համար։ Անոր վկայութեան համաձայն երբ Սմբատ Օրբելեան կը մեռնի, 1273ին, «պատուով դարդարեցին զդադադս նորա արքայակերպ ճոխութեամբ, եւ այնպէս բարձրացուցեալ բաղձականօք, խաչիւք վառելովք...»⁽⁴⁸⁾։

Հայ աղնուականութիւնը կը գործածէր նաեւ խաղի, զբօսանքի գորգեր, ինչպէս որ կը յիշէ Փարսեցի առ Վահան Մամիկոնեան գրած իր թուղթին մէջ, «սննդակից էաք ձեզ եւ խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս (գորգ) ձեր զկնի ձեր»⁽⁴⁹⁾։ Այս գորգերը հաւանաբար

Դառնալով Ռուս-Պարսիկ դիւանագիտական մարանչումներուն, Պարսիկ արքունի սովորութիւններուն պատճառով, ինչպէս ըսի՝ Էրմոլօֆի խրոխտ, անդիշող ընթացքին համար խնդիրը լուրջ հանգամանք ստացաւ, մանաւանդ գորգի վրայ կօշիկով կոխելու հարցին շուրջ։ Էրմոլօֆէն առաջ զրկուած Mr. Freyganich կը գրէ իր յիշատակարաններուն մէջ թէ պաշտօնական ընդունելութեանց ատեն գորգի կամ գորգերու վրայ մաշկէ կօշիկով կը քաշէր, եւ կ'աւելցնէ. «նա մանաւանդ ասիկա շատ հին սովորութիւն մըն է (Պարսկաստանի մէջ), եւ կը ծառայէ անոնց զեղեցիկ գորգերուն պահպանութեան, որ պարսկական տուններուն գլխաւոր զարդն է»։ (A Journey into Persia. — Letters from the Caucasus and Georgia, p. 313).

Էրմոլօֆի բրած բուն ընդդիմութեան վրայ, Ապոլլոս Միրզա զինքը ընդունեց պարսէզի մէջ, ոտքի վրայ։ Այս առթիւ Էրմոլօֆ իր յիշատակարաններուն մէջ կ'ըսէ. «առանց գորգի վրայ կանգնած ըլլալու», եւ իրեն համար տեսակ մը յաղթանակ կը նկատէ ասիկա։ Աւելորդ է ըսել որ ինքզինքը կը խորէ։ Յաւելածական տեղեկութիւններու համար տես նաեւ Travels in Russia. — Robert Lyall, London, 1825, Vol. II, p. 103-6.

(46) Հրատ. Կ. Վ. Շահնապարեան, էջ 116։

(47) Narrative. — New York, 1840, Vol. I, p. 257.

(48) Հրատ. Թիֆլիս, 1911, էջ 420։

(49) Ս. Ղաղար, 1891, էջ 644։